Հավելված N 4
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2022 թ.
հուլիսի 19-ի N 1259-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Զբոսաշրջության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մարքեթինգի և խթանման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 23-1-36.3-Ղ4-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Կոմիտեի նախագահին

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետը

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Մհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.

1. Ապահովում է Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջիկների ընդունման, սպասարկման, զբոսաշրջային ուղևորությունների կազմակերպման, տեղեկատվական բազայի ձևավորման, զարգացման ծրագրերի մշակման և մարքեթինգի իրականացման ուղղություններում կոմիտեի և նախարարությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների միջև համագործակցությանն ուղղված աշխատանքների իրականացումը,
2. Ապահովում է համաշխարհային շուկայում Հայաստանի Հանրապետության՝ որպես բարենպաստ և գրավիչ զբոսաշրջային երկրի նկարագրի ձևավորման ու ամրապնդման նպատակով աշխատանքների իրականացումը.
3. Ապահովում է զբոսաշրջության ոլորտում ազգային և օտարերկրյա ներդրումների ներգրավման համար բարենպաստ միջավայրի նկարագրի ձևավորմանն ուղղված աշխատանքների իրականացումը,

4. Ապահոում է զբոսաշրջության ոլորտի ռազմավարության, զարգացման պետական ծրագրերի մշակման գործընթացներում մարքեթինգային բաղադրիչի մշակմանը, դրանց իրականացմանը և մշտադիտարկմանն ուղղված աշխատանքները,
5. Ապահովում է ներքին շուկայում ոլորտի կազմակերպությունների ու դրանց միությունների հետ համատեղ ծրագրերի իրականացմանն ու մշտադիտարկմանն ուղղված աշխատանքները,
6. Ապահովում է պետական և տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ կոմիտեի լիազորությունների իրականացման շրջանակներում համագործակցութանն ուղղված աշխատանքների իրականացումը,
7. Ապահովում է զբոսաշրջային գործունեության վերաբերյալ տեղեկատվական, գովազդային և հրատարակչական գործունեության կազմակերպմանն ու իրականացմանն ուղղված աշխատանքները.
8. Ապահովում է համաշխարհային շուկայում Հայաստանի Հանրապետության ու հայկական զբոսաշրջային արդյունքի (այդ թվում՝ նաև գովազդատեղեկատվական նյութերի միջոցով) պատշաճ ներկայացմանն ուղղված աշխատանքների իրականացումը,
9. Ապահովում է մարքեթինգային (այդ թվում՝ արտաքին շուկաների) ուսումնասիրությունների, վերլուծությունների իրականացման և շահագրգիռ կողմերին տվյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման աշխատանքները.
10. Ապահովում է զբոսաշրջության ոլորտի զարգացման աշխատանքների իրականացման և համակարգման աշխատանքները,
11. Ապահովում է զբոսաշրջության ներդրումային ծրագրերի մշակման և դրանք իրականացման աշխատանքները,
12. Ապահովում է համաշխարհային շուկայում Հայաստանի Հանրապետության՝ որպես զբոսաշրջային երկրի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացման և խթանման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները.
13. Ապահովում է ոլորտի շահառուներին երկրի ճանաչելիության բարձրացման նպատակով անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման աշխատանքների

իրականացումը,

14. Ապահովում է տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկությունների ներկայացնումը դրանց տարածքում գտնվող զբոսաշրջային տարածաշրջանների, կենտրոնների և օբյեկտների վերանորոգման, բարեկարգման և պատշաճ վիճակում պահպանման վերաբերյալ.
15. Ապահովում է զբոսաշրջային արդյունքի խթանման և իրականացման համաշխարհային առաջավոր փորձի և ներկայացված առաջարկությունների ուսումնասիրությունների իրականացումը, ինչպես նաև ապահովում է դրանք Հայաստանի Հանրապետությունում կիրառելու համար միջոցառումների իրականացման աշխատանքները,
16. Ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

Իրավունքները՝

- Ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից անհրաժեշտ տեղեկատվություն, մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ,
- կազմակերպել շահագրգիռ մարմինների համապատասխան ներկայացուցիչների հետ քննարկումներ, հանդիպումներ համատեղ ծրագրերի մշակման, իրականացման, առաջադրված խնդիրների շուրջ լուծումների ապահովման նպատակով,
- հավաքագրել տեղեկատվություն մարքեթինգային քաղաքականության մշակման և ուսումնասիրությունների իրականացման համար,
- կազմակերպել դեպի Հայաստան ճանաչողական այցեր օտարերկրյա լրագրողների և հայտնի մարդկանց համար,
- որոշել և ընտրել թիրախային միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսները և ապահովել տվյալ ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցությունը,
- սահմանել մարքեթինգային բովանդակության մշակման ուղղություններ:

Պարտականությունները՝

- Մշակել Հայաստանի ճանաչելիության բարձրացմանն ուղղված մարքեթինգային քաղաքականությունը
- Վերլուծել զբոսաշրջային արդյունքի խթանման և իրականացման համաշխարհային առաջավոր փորձի ուսումնասիրության գործընթացը, ինչպես նաև մշակել դրանք Հայաստանի Հանրապետությունում կիրառելու համար միջոցառումներ.
- Վերլուծել Վարչության գործունեության ոլորտին առնչվող համապատասխան

հետազոտությունները և ուսումնասիրությունները.

- Համագործակցել միջազգային գործընկեր կառույցների հետ տվյալ երկրներում Հայաստանի ճանաչելիության բարձարցմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով:
- Համակարգել միջազգային ցուցահանդեսների Հայաստանի մասնակցության պատշաճ կազմակերպման գործընթացները և մարքեթինգային բովանդակության մշակման ուղղությունները
- Վերլուծել զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանն ուղղված հետազոտությունները և դրանց կիրառման ձևաչափերը
- Ուսումնասիրել և ամփոփել զբոսաշրջության ոլորտում ներդրումային ծրագրերի վերաբերյալ առաջարկները և մշատադիտարկել դրանց իրականացման գործընթացները

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ հանգստի և զվարճանքի կազմակերպման բնագավառում կամ ճանապարհորդությունների բնագավառում կամ տնտեսագիտության բնագավառում չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Կառավարում արտակարգ իրավիճակներում
2. Բանակցությունների վարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Փոփոխությունների կառավարում
5. Ժամանակի կառավարում
6. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
7. Հասարակության հետ կապերի ապահովում
8. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում

9. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
10. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն, և ունի ազդեցություն որոշակի աշխատանքների համակարգման մասով:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակեպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: